զորդիսն և կինն ըմբռնեալ, և նոքա ցուցանեն զոգն (?) եւ փախչին ի յայրս տանն եւ ի խոր թագստի, եւ նա մնայ ի ձեռս նոցա որք չարչարեն թէ Զայլն ասա՛ ուրոյն ուրոյն։ Եւ այլքն զինչս և զստացուածս բեռամբ կապեն եւ այլք որոնելով զտեղիսն՝ թէ այլ լիցի պահեալ, եւ այլք պահէին ի գրուանսն եւ ի դուրսն. եւ ի ձայնէ նոցա ելանեն Գ տաճիկ ի մի կողմանէ գեղին, որպէս զի մի մեռանց ձայն տացեն, եւ ի նետել թուփէնկին նոցա՝ յայս կոյս և յայն կոյս երթեալ դէպ ի Տաճկաց միոյն և անդէն մեռանի. և երկոսին յահի լեալ մտանեն ընդ տամբն իւրեանց, եւ նոքա զինչ որ ունէր էրէցն այն, զամենայն բեռ կապեալ եւ այլ զբստակն, քանզի ունէր բազում եւ կամէր եւս զի գնայր յերուսաղէմ ուխտիւք մեծաւ, և զամենեսեան ասէ նոցա եւ առնեն։ Եւ այլ հարցանեն տանջելով մեծաւ՝ սաստիկ ի պարանոցն կոխիւք, եւ նա մեծաւ պառաւմամբ ասէ. Ա՛յ Մահմէտ, սակաւ ինչ զաղ ու հացն իմ կերել ես, եւ արդ մինչչեւ մեռեալ իցեմ թո՛ղ վասն Աստուծոյ, և այլ ոչ գոյ ինչ իմ, այդքան է զոր առիք ձեր։ Եւ նոքա ի բանից նորա երկեան, զի ժամանակաւ մշակ լեալ են նորա, եւ ասացին. Եթէ մնասցէ ողջ՝ մատնեսցէ զմեզ ի դատ, և ոչ կարեմք համարձակ ի գաւառս շրջիլ, քանզի գիտաց ըզմեզ թէ ա՛յք եմք։ Եւ անդէն սրով զնա խողխողեալ թաւալեն ի մէջ արեան եւ բարձեալ զամենայն ինչս նորա ի վերայ ձիոցն եւ ջորոցն զոր ընդ իւրեանս բերեալ էին, եւ երթան մեծաւ ուրախութեամբ եւ երգօք, եւ տան ահ գիւղիցն թէ Ահա՛ աւուրց ինչ ի վերայ այս ինչ տան գալոց եմք, այդպէս գիտասջիք։ Եւ ի լուսանալ առաւօտուն ամենայն բնակիչք գեղոյն, քանզի ի գիշերս ի խզճէ[1]) և յաղաղակէ երի-

1) խղճի.